



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

9 փետրվարի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ԴՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 56 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց.

Համաձայն Երևանի ավագանու 22.12.2020թ. «Գայանե Մելքոմ Մելքոմյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» հ.299-Ա որոշման, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N27 արձանագրության՝ Երևանի ավագանու Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ՝ Գայանե Մելքոմ Մելքոմյանի մանդատը տրվել է Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Անուշ Բլոյանին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտնեց, որ Երևանի ավագանու ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Հասմիկ Խաչունցը վայր է դրել խմբակցության քարտուղարի իր լիազորությունները և ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության կողմից խմբակցության քարտուղար է ընտրվել Արմեն Գալջյանը:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտնեց, որ Երևանի ավագանու 09.02.2021թ. նիստի օրակարգի նախագծի 5-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և 19-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծերը հանում է օրակարգի նախագծից:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2021** թվականի փետրվարի **9**-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի **1**-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի **N4**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի **N8**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
7. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
8. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
9. «Այլանս-Տերմինալ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
10. «Անդակո» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
11. «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
12. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N308**-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
13. **N ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6** գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
14. Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:
15. Երևան համայնքի սեփականություն համարվող Դավիթ Անհաղթի փողոցի **h.6** շենքի **h.148**<sup>1</sup> **16.5** քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին:
16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
17. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի **1**-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **42** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **41**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվեց միաձայն

**2. ԼՄԵՑԻՆ** - Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ **Հ. Մարությանը** հայտնեց, որ, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու **2009** թվականի հունիսի **18**-ի **N1**-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի **96**-րդ կետով, Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն՝ Էդուարդ Ավետիսյան,
- ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն՝ Մարկոս Հարությունյան,
- ԼՈՒՅՍ խմբակցություն՝ Անի Խաչատրյան

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Էդուարդ Ավետիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն
2. Մարկոս Հարությունյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն
3. Անի Խաչատրյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **46** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ - **46**  
դեմ – **0**  
ձեռնպահ – **0**

Որոշումն ընդունվեց միաձայն

**3. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի **N4**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Արմեն Գալջյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի **N4**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի «Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին» **N 4**-Ա որոշումը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու **46** անդամ  
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ **46**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**4. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի **N8**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Արմեն Գալջյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի **N8**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյանին:

**2.** Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **10**-ի «Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին» **N 8**-Ա որոշումը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու **46** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ **46**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**5. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**2.** Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1. Էռնեստ Ավանեսով** – Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ** խմբակցության անդամ

«Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ **2. Մարությանը:**

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև **2018** թվականի հունիսի **8**-ին կնքված «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **50** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **50**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**6. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դավիթ Համբարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **11** անդամ.

**1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ**

**2. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ** խմբակցության ղեկավար

**3. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

**4. Կարինե Բաղդասարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

**5. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ** խմբակցության ղեկավար

**6. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ**

**7. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

**8. Սերգեյ Գյոզալյան- Երևանի ավագանու անդամ**

**9. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

**10. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

**11. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դավիթ Համբարյանը:

**ԸՆԴՄԻՋՈՒՄ:**

Նիստը վերսկսվեց ժամը **14.00**-ին:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու **7** անդամ.

1. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ
3. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
4. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
5. Անահիտ Ասատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Գայանե Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դավիթ Համբարյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի **N16**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» **N 10** որոշման.

1. **N 1** հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «**1.Վարչություններ**» գլուխը լրացնել նոր **23**-րդ և **24**-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«**23**) Գործերի կառավարման և սպասարկման վարչություն»

«**24**) Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն».

2) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «**3.Բաժիններ**» գլուխը լրացնել նոր **9**-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«**9**) Արձանագրային և արխիվային գործի բաժին».

3) ուժը կորցրած ճանաչել որոշման **N1** հավելվածի «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «**2. Քարտուղարություն**» գլուխը և «**3 Բաժիններ**» գլխի **2**-րդ կետը:

2. **N 2** հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «**Քարտուղարություն**» տողը շարադրել նոր խմբագրությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
-	Գործերի կառավարման և սպասարկման վարչություն				
1	վարչության պետ	1	346000		346000
2	գլխավոր մասնագետ	1	250000		250000
3	առաջատար մասնագետ	3	225000		675000
4	Խմբակցության փորձագետ	5	219000		1095000
-	Ընդհանուր բաժին				
5	բաժնի պետ	1	291000		291000
6	գլխավոր մասնագետ	2	225000		450000
7	առաջատար մասնագետ	2	219000		438000
8	առաջին կարգի մասնագետ	3	207000		621000
-	Քաղաքացիների սպասարկման բաժին				
9	բաժնի պետ	1	291000		291000
10	գլխավոր մասնագետ	7	225000		1575000
11	առաջատար մասնագետ	9	219000		1971000
12	առաջին կարգի մասնագետ	10	207000		2070000
-	Մատակարարման և տեխնիկական սպասարկման բաժին				
13	բաժնի պետ	1	291000		291000
14	գլխավոր մասնագետ	2	225000		450000
15	առաջատար մասնագետ	1	219000		219000
16	երկրորդ կարգի մասնագետ	1	201000		201000
17	գործավար	10	164000		1640000
18	պատճենահանող	1	164000		164000
19	վարորդ	1	225000		225000
20	վարորդ	7	210000		1470000

21	վարորդ	34	201000	6834000
22	տեխնիկական սպասարկող	1	201000	201000
23	բանվոր	2	201000	402000
	ԸՆԴԱՄԵՆԸ	106		22170000

2) «Մ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գործերի կառավարման և սպասարկման վարչություն» տողից հետո ավելացնել «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն» տողը՝ հետևյալ բովանդակությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն				
1	վարչության պետ	1	346000		346000
2	գործավար	1	164000		164000
-	Մրցույթների և ստեղծագործման կազմակերպման բաժին				
3	բաժնի պետ	1	291000		291000
4	գլխավոր մասնագետ	3	225000		675000
5	առաջատար մասնագետ	2	219000		438000
-	Կադրային գործի վարման բաժին				
6	բաժնի պետ	1	291000		291000
7	Գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	225000		225000
8	գլխավոր մասնագետ	1	225000		225000
9	առաջատար մասնագետ	2	219000		438000
-	Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի մշակման և ներդրման բաժին				
10	բաժնի պետ	1	291000		291000
11	գլխավոր մասնագետ	1	225000		225000



12	առաջատար մասնագետ	1	219000		219000
	ԸՆԴԱՄԵՆԸ	16			3828000

3) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՁԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողից առաջ ավելացնել «Արձանագրային և արխիվային գործի բաժին» նոր տողով.

-	Արձանագրային և արխիվային գործերի բաժին				
1	բաժնի պետ	1	322000		322000
2	գլխավոր մասնագետ	1	225000	67500	292500
3	գլխավոր մասնագետ	1	225000		225000
4	առաջատար մասնագետ	2	219000		438000
5	առաջին կարգի մասնագետ	1	207000		207000
	ԸՆԴԱՄԵՆԸ	6		67500	1484500

4) Ուժը կորցրած ճանաչել որոշման N 2 հավելվածի «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անձնակազմի կառավարման բաժին» տողը:

5) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՁԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողում «594,5», «106050» և «141516550» թվերը փոխարինել համապատասխանաբար «604,5», «98550» և «144356050» թվերով:

6) «Ամբողջ» տողում «2131,5», «106050» և «463235350» թվերը փոխարինել «2141,5», «98550» և «466074850» թվերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 45 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 31, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 10

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Նուարդ Վարդանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ

3. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

4. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման.

1. N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլխի 1-ին կետը լրացնել 8.1-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«8.1) քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N1 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլխի 1-ին կետի 5-րդ և 8-րդ ենթակետերը.

2. N 2 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6-րդ կետը լրացնել նոր տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

-	Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին			
1	բաժնի պետ	1	291000	291000
2	բաժնի պետի տեղակալ	2	250000	500000
3	գլխավոր մասնագետ	6	225000	1350000
4	առաջատար մասնագետ	15	219000	3285000

5	առաջին կարգի մասնագետ	9	207000	1863000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>33</b>		<b>7289000</b>

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6-րդ կետում ««Ամբողջը» տողի «185» և «39622000» թվերը համապատասխանաբար փոխարինել «183» և «39130000» թվերով:

3) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողի «1285» և «277782000» թվերը համապատասխանաբար փոխարինել «1283» և «277290000» թվերով:

4) Ուժը կորցրած ճանաչել «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժին» և «Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին» տողերը:

5) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1539» և «322210800» թվերը փոխարինել համապատասխանաբար «1537» և «321718800» թվերով:

6) «Ամբողջը» տողում «2133,5» և «463727350» թվերը փոխարինել «2131,5» և «463235350» թվերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 43 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 24, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**8. ԼՍԵՑԻՆ** - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ:

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Վահե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ:

1. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ՈՐՈՇՎԵՑ –1.** Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձին՝ **2021** թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **2021** թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **36** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **31**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**9. ԼՍԵՑԻՆ** - «Ալյանս-Տերմինալ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Արթուր Իսպիրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Հարությունյանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Ալյանս-Տերմինալ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ –1.** Թույլատրել «Ալյանս-Տերմինալ» ՍՊԸ-ին **2021** թվականի ընթացքում սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **34** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **30**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**10. ԼՍԵՑԻՆ** - «Անդակո» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Անդակո» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել «Անդակո» ՍՊԸ-ին **2021** թվականի ընթացքում սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **36** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` **30**, դեմ` **3**, ձեռնպահ` **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**11. ԼՍԵՑԻՆ** - «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Հաստատել «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **37** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` **36**, դեմ` **1**, ձեռնպահ` **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**12. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N308-Ս** որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N308-Ս** որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» **N308-Ս** որոշումը (Որոշում) լրացնել հետևյալ բովանդակությամբ` նոր` **5**-րդ կետով.

«**5.** Սույն որոշման իմաստով ընտանիքի անդամներ են հանդիսանում ամուսինները, ծնողները և զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), տատը և պապը, եթե նրանք Որոշման **2**-րդ կետի **2**-րդ ենթակետում նշված զոհվածի կամ մահացածի մահվան օրվա դրությամբ

փաստացի բնակվել են նույն հասցեում, ինչպես նաև քույրերը և եղբայրները, եթե վերջիններս Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գոհվածի կամ մահացածի մահվան օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում և ամուսնացած չեն եղել:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 36 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**13. ԼՍԵՑԻՆ** - N ԵՔ-ՀՄԱԱՊԶԲ-20/6 գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «N ԵՔ-ՀՄԱԱՊԶԲ-20/6 գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** –1. N ԵՔ-ՀՄԱԱՊԶԲ-20/6 գնման գործընթացը հայտարարել չկայացած:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 37 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**14. ԼՍԵՑԻՆ** - Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Եղ. Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2016թ. հ.15062016-01-0145 վկայական) 1030.59քմ մակերեսով տարածքի (հասարակական շինություններ՝ 856.94քմ, 147.39քմ և 26.26քմ ծածկ) և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ

մակերեսով հողամասի համար կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2024 թվականի փետրվարի 10-ը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 35 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 105-րդ կետի պահանջները՝ որոշվեց Երևանի ավագանու 09.02.2021թ. նիստի տևողությունը ժամը 17.00-ից հետո երկարաձգել:

**15. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող Դավիթ Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող Դավիթ Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Դ. Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.10.2020թ. հ.30102020-01-0178 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Դավիդկովային:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 34 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**16. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Հայկ Միրզոյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ –1.** Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցի հ.27/3 հասցեում գտնվող Գեորգի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող **2192.0** քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1**-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **30**, դեմ՝ **2**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**17. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի մի շարք հասցեներում գտնվող թվով **5** պոմպակայանների և թվով **4** խորքային հորերի զբաղեցրած հողամասերը փոխադրել «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1**-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **34**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ



Երևանի քաղաքապետ Հ. Մարությանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2021** թվականի մարտի **16**-ին, ժամը **11.00**-ին:

Առաջարկն ընդունվեց:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**